



Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2017.07.26/1(38)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 09.02.2017

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Բրատիսլավա
Ընդունման ամսաթիվը 15.05.2015
Ստորագրման ամսաթիվը 15.05.2015
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ-Ի ԵՎ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը

և

Մլովակիայի Հանրապետությունը,

ցանկանալով կնքել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագիր,
 պայմանավորվեցին հետևյալի մասին.

**Հոդված 1
 ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

Սույն Համաձայնագիրը կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր հանդիսանում են Պայմանավորվող պետություններից մեկի կամ միաժամանակ երկուսի ռեզիդենտներ:

**Հոդված 2
 ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ**

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների կողմից գանձվող եկամտի և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:
2. Եկամտից և գույքից գանձվող հարկեր են համարվում եկամտի ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր արժեքից կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերից գանձվող, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներից, ձեռնարկությունների կողմից վճարված աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումների ընդհանուր գումարից, ինչպես նաև գույքի հավելվածից գանձվող հարկերը:
3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ, մասնավորապես՝
 - ա) Հայաստանի Հանրապետությունում՝
 - i) շահութահարկ,
 - ii) եկամտահարկ,

- iii) գույքահարկ.
- բ) Սլովակիայի Հանրապետությունում՝
- i) ֆիզիկական անձանց եկամտահարկ,
- ii) իրավաբանական անձանց եկամտահարկ:

4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաև ցանկացած՝ նույնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք սահմանվում են սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող Կողմերի պետությունների իրավասու մարմինները միմյանց ծանուցում են իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

**Հոդված 3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե համատեքստն այլ բան չի պահանջում.

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, համատեքստից կախված, նշանակում են՝ Հայաստան կամ Սլովակիայի Հանրապետություն,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն, և երբ այն օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավագործությունը՝ համաձայն ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի,

գ) «Սլովակիայի Հանրապետություն» տերմինը նշանակում է Սլովակիայի Հանրապետություն, և երբ այն օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, որի նկատմամբ Սլովակիայի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավագործությունը՝ համաձայն ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի,

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

զ) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ,

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները, համապատասխանաբար, նշանակում են՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով կամ օդանավով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող կողմի պետությունում գտնվող վայրերի միջև,

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի Հանրապետության դեպքում՝ ֆինանսների նախարարություն կամ վերջինիս լիազորված ներկայացուցիչ,

ii) Սլովակիայի Հանրապետության դեպքում՝ ֆինանսների նախարարություն կամ վերջինիս լիազորված ներկայացուցիչ,

ժ) «քաղաքացի» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա իր, որպես այդպիսին, կարգավիճակն ստացած ցանկացած իրավաբանական անձ, բաժնետիրական ընկերություն կամ ընկերակցություն,

ժա) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեությունների իրականացումը:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագրի կիրառման ցանկացած պահի դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե համատեքստն այլ բան չի պահանջում, պետք է ունենա այն նշանակությունը, որն այն ունի այդ պահին տվյալ Պայմանավորվող պետության օրենքի համաձայն՝ այն հարկատեսակների մասով, որոնց նկատմամբ Համաձայնագիրը կիրառվում է. ընդ որում՝ այդ Պայմանավորվող պետությունում գործող հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ Պայմանավորվող պետության այլ օրենքներով այդ տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

**Հոդված 4
ՌԵԶԻԴԵՆՏ**

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պայմանավորվող պետության օրենքների համաձայն, ենթակա է հարկման այդ Պայմանավորվող պետությունում իր բնակության, ռեզիդենտության, ստեղծման (գրանցման) վայրի, կառավարման

վայրի կամ ցանկացած այլ համանուն չափանիշի հիման վրա, և ներառում է նաև այդ Պայմանավորվող պետությունը և նրա ցանկացած վարչատարածքային ստորաբաժանումը կամ տեղական իշխանության մարմինը: Սակայն այդ տերմինը չի ներառում որևէ անձի, որն այդ Պայմանավորվող պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետության աղբյուրներից ստացած եկամտից կամ այնտեղ գտնվող կապիտալից:

2. Այն դեպքում, երբ, առաջին պարբերության դրույթների հիման վրա, ֆիզիկական անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան. իսկ եթե նա երկու Պայմանավորվող պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որի հետ իր անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են,

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պայմանավորվող պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պայմանավորվող պետություններից ոչ մեկում իր տրամադրության տակ չունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար երկու Պայմանավորվող պետություններում էլ բնակվում է, կամ եթե նա սովորաբար չի բնակվում դրանցից ոչ մեկում, ապա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է,

դ) եթե նա երկու Պայմանավորվող պետությունների քաղաքացին է կամ դրանցից ոչ մեկի քաղաքացին չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ, առաջին պարբերության դրույթների հիման վրա, ֆիզիկական անձից տարբերվող անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, ապա նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա փաստացի ղեկավարման վայրը:

Հոդված 5

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը ներառում է, մասնավորապես՝

- ա) կառավարման վայրը,
- բ) մասնաճյուղը,
- գ) գրասենյակը,
- դ) գործարանը,
- ե) արհեստանոցը, և
- զ) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցք, քարհանքը կամ բնական պաշարների հետազոտման կամ արդյունահանման ցանկացած այլ վայրը:

3. «Մշտական հաստատություն» տերմինը ներառում է նաև՝

ա) շինարարական հրապարակը, կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը, բայց միայն այն դեպքում, երբ այդպիսի հրապարակի, ծրագրի կամ գործունեության տևողությունը 9 ամսից ավել է.

բ) Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից ծառայությունների մատուցումը, ներառյալ խորհրդատվական ծառայությունները՝ այդ նպատակով ձեռնարկության կողմից վարձված աշխատողների կամ այլ անձնակազմի միջոցով, բայց միայն այն դեպքում, երբ այդ բնույթի գործունեությունը մյուս Պայմանավորվող Կողմի պետության տարածքում (նույն կամ այդ ծրագրի հետ կապված ծրագրի համար) ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում շարունակվում է այնքան ժամկետով կամ ժամկետներով, որը գերազանցում է 6 ամիսը:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում՝

- ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող սպրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,
- բ) ձեռնարկությանը պատկանող սպրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,
- գ) ձեռնարկությանը պատկանող սպրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,
- դ) գործունեության կայուն վայրի պահումը՝ ձեռնարկության համար բացառապես սպրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,
- ե) գործունեության կայուն վայրի պահումը՝ ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով,
- զ) գործունեության կայուն վայրի պահումը բացառապես *ա-է* ենթապարբերություններում նշված գործունեությունների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ գործունեության կայուն վայրի պահման

ամբողջական գործունեությունը այդ համակցության արդյունքում շարունակում է կրել նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներին՝ այն դեպքում, երբ անկախ կարգավիճակով գործակալ չհանդիսացող անձը, որի նկատմամբ կիրառվում է 6-րդ պարբերությունը, գործում է ձեռնարկության անունից և Պայմանավորվող պետությունում ունի և սովորաբար իրականացնում է ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, ապա այդ ձեռնարկությունը այդ Պայմանավորվող պետությունում համարվում է մշտական հաստատություն ունեցող՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության մասով, բացառությամբ այն դեպքի, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ պարբերությունում նշվածով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության մշտական վայրի միջոցով, այդ պարբերության դրույթների համաձայն՝ այդ գործունեության մշտական վայրը չի վերածում մշտական հաստատության:

6. Ձեռնարկությունը չի համարվում Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ նա ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ Պայմանավորվող պետությունում բրոքերի, առևտրային գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ նման անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պայմանավորվող պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպով), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի վերածում մյուսի մշտական հաստատության:

Հոդված 6

ԵԿԱՍՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացած եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Տերմինն ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենքի դրույթները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող՝ փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերը կամ օդանավերը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին պարբերության դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ պարբերությունների դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացած եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

ՇԱՀՈՒՅԹ ԶԵՌՆԱՐԿԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձևով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ պարբերության դրույթները, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող՝ միանգամայն ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցնել մշտական հաստատության ձեռնարկատիրական գործունեության նպատակներով կատարված ծախսերը, այդ թվում՝ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից՝ կատարված են դրանք այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլ տեղում:

4. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության տարբեր ենթամասերի միջև ձեռնարկության ընդհանուր շահույթի համամասնական բաշխման հիման

վրա, ապա այդ Պայմանավորվող պետությանը 2-րդ պարբերությամբ չի արգելվում որոշել հարկման ենթակա շահույթը այդպիսի բաշխման ընդունված եղանակով: Այնուամենայնիվ, բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածի սկզբունքներին:

5. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար միայն ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չէ այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ պարբերությունների նպատակների համար մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի որոշվում է նույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր և բավարար պատճառ:

7. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնք առանձին քննարկվում են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային գործակալությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

Հոդված 9

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երբ՝

- ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ
 - բ) նույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,
- և երկու դեպքերից յուրաքանչյուրում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պայմանավորվող պետությունում, և այդ ձևով ներառված շահույթի բոլոր տարբերը համարվում են շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը նշված Պայմանավորվող պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները լինեին այնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև են, ապա այդ մյուս Պայմանավորվող պետությունը կատարում է այդպիսի շահույթից իր գանձած հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10

ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է համարվում շահաբաժիններ վճարող կազմակերպությունը՝ այդ Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն. սակայն եթե այդ շահաբաժինների փաստացի սեփականատերը

հանդիսանում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ապա այդ դեպքում գանձված հարկը չի կարող գերազանցել՝

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը կազմակերպություն է (ոչ ընկերակցություն) և ուղղակիորեն տնօրինում է շահաբաժինները վճարող ընկերության բաժնետիրական կապիտալի առնվազն 10 տոկոսը,

բ) շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:
Սույն պարբերության դրույթները չեն ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ

պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև՝ եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է հարկային կարգավորման այնպես, ինչպես կարգավորվում է բաժնետոմսերից եկամուտը՝ այն Պայմանավորվող պետության օրենքների համաձայն, որի ռեզիդենտն է բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և մասնակցությունը, որի կապակցությամբ վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, ապա այդ մյուս Պայմանավորվող պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պայմանավորվող պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

**Հոդված 11
ՏՈԿՈՍՆԵՐ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են, այդ Պայմանավորվող պետության օրենքների համապատասխան. բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

3. Չնայած 2-րդ պարբերության դրույթներին՝ մի Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսները, որոնց փաստացի սեփականատերն է Պայմանավորվող պետության կառավարությունը, վարչատարածքային ստորաբաժանումները, տեղական իշխանության մարմինները, կենտրոնական բանկը կամ ցանկացած այլ ֆինանսական կազմակերպություն, որը բացառապես պատկանում է կառավարությանը, կամ կառավարության կողմից երաշխավորված տոկոսներով տրամադրվող վարկերը ազատվում են հարկումից առաջինը նշված Պայմանավորվող պետությունում:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ եկամուտ բոլոր տեսակի պարտապահանջներից, անկախ հիպոտեկային ապահովումից և պարտապահի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարզավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակներով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հասուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող՝ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքների համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 12

ՌՈՅԱԼԹԻՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթիները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան. բայց եթե ստացողը ռոյալթիների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը:

3. «Ռոյալթիներ» տերմինը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում՝ գրական, արվեստի կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների կամ ռադիո- կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար:

4. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ռոյալթիները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ռոյալթիները, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը Պայմանավորվող պետությունն է, նրա վարչատարածքային ստորաբաժանումը, իշխանության տեղական մարմինը կամ այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտը: Սակայն երբ ռոյալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ռոյալթիներ վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ռոյալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հաստիք հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 13

ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃ

1. 6-րդ հոդվածում սահմանված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ միասին) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ընկերության բաժնետոմսերի կամ այլ բաժնետիրական իրավունքների օտարումից ստացված արժեքի հավելաճը, որոնց արժեքի 50 տոկոսից ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում չնշված ցանկացած գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է օտարող անձը:

Հոդված 14

ԵԿԱՄՈՒՏ ՎԱՐՉՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ վարձու աշխատանքի դիմաց ստացած աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում, եթե այդ վարձու աշխատանքը չի կատարվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը կատարվում է այդ կերպով, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Չնայած 1-ին պարբերության դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը նշված Պայմանավորվող պետությունում, եթե.

ա) ստացողը դիտարկվող ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. 2-րդ պարբերության ա ենթակետում նշված ժամանակահատվածի հաշվարկման համար հաշվի են առնվում.

ա) ֆիզիկական ներկայության բոլոր օրերը, այդ թվում՝ նաև ժամանման և մեկնման օրերը,

բ) Պայմանավորվող պետությունում աշխատելու ժամանակ գործուղման մեկնելու ժամանակահատվածը, որն ուղղակիորեն կապված է տվյալ Պայմանավորվող պետությունում աշխատանքի հետ:

4. 2-րդ պարբերության թ ենթակետում նշված «գործատու» տերմինը նշանակում է՝ անձ, ով կատարված աշխատանքի համար ունի իրավունք և կրում է աշխատանքի կատարման հետ կապված պատասխանատվություն և ռիսկ:

5. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից իրականացվող միջազգային փոխադրումներում շահագործվող նավի տախտակամածի վրա կամ օդանավում վարձու աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը կարող է հարկվել այդ Պայմանավորվող պետությունում:

Հոդված 15

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից, որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի կամ համանման մարմնի անդամ ստացած տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

Հոդված 16

ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Չնայած 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության դերասանը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործիչի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործիչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործիչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի, որպես արվեստի գործիչ կամ մարզիկ, անձնական գործունեությունից ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում, եթե այդ գործունեությունն իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում և ամբողջովին կամ մասնակիորեն ֆինանսավորվում է առաջինը նշված Պայմանավորվող պետության կամ վերջինիս վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից՝ երկու Պայմանավորվող պետությունների հաստատած՝ մշակութային կամ մարզական փոխանակման ծրագրերի շրջանակներում:

Հոդված 17

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին նախկինում կատարած վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

**Հողված 18
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

1. Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից այդ Պայմանավորվող պետությանը կամ վարչատարածքային ստորաբաժանմանը կամ տեղական իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված՝ կենսաթոշակից տարբերվող աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման՝

ա) միայն այդ Պայմանավորվող պետությունում, կամ

բ) միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պայմանավորվող պետությունում և այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից, ով՝

i) այդ Պայմանավորվող պետության քաղաքացի է, կամ

ii) չի դարձել այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից կամ նրանց ստեղծած հիմնադրամներից այդ Պայմանավորվող պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված որևէ կենսաթոշակ ենթակա է հարկման՝

ա) միայն այդ Պայմանավորվող պետությունում,

բ) սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ու քաղաքացին:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց աշխատավարձի, ռոճիկի և համանման այլ վարձատրությունների, ինչպես նաև կենսաթոշակների նկատմամբ:

**Հողված 19
ՌԻՍԱՆՈՂՆԵՐ**

1. Ուսանողը կամ ձեռնարկությունում պրակտիկա անցնողը կամ փորձակը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և ով գտնվում է առաջինը նշված Պայմանավորվող պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, չի հարկվում այդ Պայմանավորվող պետությունում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացված վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջանում են այդ Պայմանավորվող պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. 1-ին պարբերությունում նշված ուսանողի կամ պրակտիկանտի ստացած դրամաշնորհի, ուսման նպատակով տրամադրվող գումարների և աշխատանքի վարձատրության նկատմամբ, որոնք սահմանված չեն 1-ին պարբերությունում, ի հավելումն պետք է կիրառելի լինեն այն բոլոր հարկային արտոնությունները, նվազեցումները և ազատումները, որոնք կիրառելի են այցելության երկիր համարվող Պայմանավորվող պետության ուսանողների կամ ստաժորների նկատմամբ:

**Հողված 20
ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ**

1. Ֆիզիկական անձը, ով ժամանել է Պայմանավորվող պետություն այդ պետության համալսարանում, քոլեջում, դպրոցում կամ այլ հավատարմագրված ուսումնական հաստատությունում ուսուցման կամ հետազոտման նպատակով, և ով հանդիսանում է կամ մինչև անմիջապես ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, կազատվի հարկումից առաջինը նշված Պայմանավորվող պետությունում այդպիսի ուսուցման կամ հետազոտման համար վարձատրության առնչությամբ՝ այդ նպատակով իր առաջին ժամանման օրվանից 2 տարին չզերազանցող ժամանակահատվածում՝ պայմանով, որ այդպիսի վարձատրությունն առաջանում է այդ Պայմանավորվող պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության դրույթները չեն վերաբերում հետազոտությունից ստացվող վարձատրությանը, եթե այդպիսի հետազոտությունն իրականացվում է ոչ թե հասարակական, այլ հիմնականում հատուկ անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

**Հողված 21
ԱՅԼ ԵՎ ԱՄՈՒՏ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չնշված տեսակները, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

2. 1-ին պարբերության դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում սահմանված անշարժ գույքից եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվել է եկամուտը, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

3. Չնայած սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չնշված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացած եկամտի տեսակները նույնպես կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

**Հոդված 22
ԳՈՒՅՔ**

1. 6-րդ հոդվածում նշված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող պետության մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով կամ օդանավերով ներկայացված գույքը և այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքը ենթակա են հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է այսպիսի գույքի սեփականատեր ձեռնարկությունը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

**Հոդված 23
ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

1. Երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտը, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք կարող են հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, ապա առաջինը նշված Պայմանավորվող պետությունը թույլ է տալիս.

ա) այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկից հանել մյուս Պայմանավորվող պետությունում վճարված եկամտային հարկին հավասար գումար,

բ) այդ ռեզիդենտի գույքից գանձվող հարկից հանել մյուս Պայմանավորվող պետությունում վճարված գույքահարկին հավասար գումար:

Սակայն այդպիսի հանումները երկու դեպքում էլ չպիտի գերազանցեն մինչև հանումի տրամադրումը հաշվարկված եկամտահարկի կամ գույքահարկի այն մասը, որը վերաբերում է, հանգամանքներից կախված, այն եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Երբ, սույն Համաձայնագրի որևէ դրույթին համապատասխան, մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը ազատված են հարկումից, ապա այդ Պայմանավորվող պետությունը, համենայն դեպս, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի վրա դրվող հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

**Հոդված 24
ՈՉ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց նույն հանգամանքների դեպքում, մասնավորապես կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պայմանավորվող պետության քաղաքացիները: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտ համարվող՝ քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, քան այն հարկումը և դրա հետ կապված պարտավորության կատարումն է, որին ենթակա են այդ Պայմանավորվող պետությունների քաղաքացիները նույն պայմանների դեպքում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս Պայմանավորվող պետությունում՝ այդ մյուս Պայմանավորվող պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումից: Սույն դրույթը

չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին, քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա, հարկման նպատակներով տրամադրել այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 6-րդ կամ 12-րդ հոդվածի 6-րդ պարբերությունների դրույթները, տոկոսները, ռոյալթին և Պայմանավորվող պետության ձեռնարկության կատարած այլ վճարումները մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին՝ այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են հանման այն նույն պայմաններով, որոնցով հանվում են առաջինը նշված պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով պետք է ենթակա լինի հանման նույն պայմաններով, ինչպես պարտքը՝ առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության ռեզիդենտին:

5. Պայմանավորվող պետության այն ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկվում է այդ մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը նշված Պայմանավորվող պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան առաջինը նշված Պայմանավորվող պետության այլ նման ձեռնարկությունները:

6. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են հարկերի ցանկացած տեսակի և ձևի նկատմամբ:

Հոդված 25

ՓՈԽՀԱՄԱԶԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, այդ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է 24-րդ հոդվածի 1-ին պարբերությանը, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի քաղաքացին է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմումը կհամարի հիմնավորված, և եթե չի կարողանա հանգել գոհացուցիչ որոշման, կձգտի հարցը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ նպատակ ունենալով բացառելու սույն Համաձայնագրին ոչ համապատասխան հարկումը: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կատարվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքներում սակա ցանկացած ժամանակային սահմանափակման:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կձգտեն փոխադարձ համաձայնությամբ հարթել բոլոր այն դժվարություններն ու հակասությունները, որոնք կարող են առաջանալ Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են նաև, Համաձայնագրով չնախատեսված դեպքերում, միասին խորհրդակցել կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները, ներառյալ նրանցից կամ նրանց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովները, կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով:

Հոդված 26

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Համաձայնագրի դրույթների կամ ներքին օրենքների կիրառման համար փոխանակում են տեղեկություններ Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական ինքնակառավարման մարմինների անունից կիրառվող ցանկացած հարկատեսակի վերաբերյալ այն չափով, որը չի հակասում սույն Համաձայնագրի դրույթներին: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության՝ 1-ին պարբերության համաձայն ստացած ցանկացած տեղեկություն համարվում է զաղտնի այնպես, ինչպես այդ Պայմանավորվող պետության ներքին օրենքին համապատասխան ստացած տեղեկությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են 1-ին պարբերությունում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը, բողոքարկումների քննմանը: Այդ անձինք կամ մարմինները

տեղեկությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ: Չնայած վերոնշյալին՝ Պայմանավորվող պետության ստացած տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, եթե, երկու Պայմանավորվող պետությունների օրենսդրության համաձայն, այդ տեղեկությունը կարող է օգտագործվել նման այլ նպատակներով, և տրամադրող Պայմանավորվող պետության իրավասու մարմինը թույլատրում է նման օգտագործումը:

3. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) իրականացնել իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործունեությանը հակասող վարչական միջոցառումներ.

բ) ներկայացնել տեղեկություններ, որոնք հասանելի չեն իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում.

գ) ներկայացնել տեղեկություններ, որոնք բացահայտում են որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ՝ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե Պայմանավորվող պետությունը տեղեկություններ է պահանջում սույն հոդվածի համաձայն, մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի տեղեկություններ ձեռք բերելու իր միջոցները՝ ստանալու համար պահանջված տեղեկությունները. նույնիսկ այն դեպքում, եթե այդ մյուս Պայմանավորվող պետությունն իր հարկային նպատակների համար չունի այդպիսի տեղեկությունների անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ պարունակվող պարտավորությունը սույն հոդվածի 3-րդ կետով ենթարկվում է սահմանափակման, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես թույլտվություն Պայմանավորվող պետությանը՝ մերժելու տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ ինքը չունի այդպիսի տեղեկությունների նկատմամբ ներքին հետաքրքրություն:

5. 3-րդ պարբերության դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես թույլտվություն Պայմանավորվող պետությանը՝ մերժելու տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկություններին տիրապետում է բանկը, այլ ֆինանսական հաստատություն, նշանակված անձը կամ գործակալությունում աշխատող անձը կամ ինստիտուտը, կամ՝ որ այն վերաբերում է անձի սեփական շահերին:

**Հոդված 27
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

1. Պայմանավորվող պետությունները միմյանց օգնություն են ցուցաբերում եկամտային հայցի հավաքագրման գործում: Այդ օգնությունը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածների գործողությամբ: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանել սույն հոդվածի կիրառման եղանակը:

2. «Եկամտային հայց» տերմինը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ Պայմանավորվող պետությունների կամ նրանց վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների անունից գանձվող ցանկացած տեսակի հարկի գծով առաջացած գումար՝ այնքանով, ինչքանով հարկումը չի հակասում սույն Համաձայնագրին կամ ցանկացած այլ միջազգային պայմանագրի, որի կողմեր են նրանք, ինչպես նաև՝ այդ գումարին առնչվող տոկոսներ, վարչական տուգանքներ և դրանց հավաքման ու պահման ծախսեր:

3. Երբ Պայմանավորվող պետության եկամտային հայցը պետք է ապահովվի այդ պետության օրենսդրության համաձայն և վերաբերում է այն անձին, որն այդ պահի դրությամբ, այդ Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն, չի կարող խոչընդոտել դրա հավաքմանը, ապա, այդ Պայմանավորվող պետության իրավասու մարմնի պահանջով, այդ եկամտային հայցը կընդունվի մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից: Այդ եկամտային հայցը ենթակա է հավաքագրման այդ մյուս պետության կողմից՝ նրա՝ սեփական հարկերի գանձման նկատմամբ կիրառվող օրենսդրության դրույթներին համապատասխան. այնպես, ինչպես այդ եկամտային հայցը եթե լինեք այդ մյուս Պայմանավորվող պետության եկամտային հայցը:

4. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության եկամտային հայցը այնպիսի հայց է, որի նկատմամբ այդ Պայմանավորվող պետությունը կարող է, իր օրենսդրության համաձայն, գանձումն ապահովելու համար ձեռնարկել պահպանման միջոցներ, ապա այդ եկամտային հայցը, այդ Պայմանավորվող պետության իրավասու մարմնի պահանջով, ընդունվում է մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից՝ պահպանման միջոցներ ձեռնարկելու նպատակով: Այդ մյուս Պայմանավորվող պետությունը, իր օրենսդրության դրույթներին համապատասխան, պահպանման միջոցներ է ձեռնարկում այդ եկամտային հայցի առնչությամբ այնպես, ինչպես կձեռնարկեք, եթե այդ եկամտային հայցը լինեք այդ մյուս Պայմանավորվող պետության եկամտային հայցը, եթե նույնիսկ այդ միջոցների ձեռնարկման պահին եկամտային հայցը չի կատարվել առաջինը նշված Պայմանավորվող պետությունում կամ վերաբերում է այն անձին, որն իրավունք ունի խոչընդոտելու դրա հավաքմանը:

5. Անկախ 3-րդ և 4-րդ պարբերությունների դրույթներից՝ Պայմանավորվող պետության կողմից 3-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն ընդունված եկամտային հայցը այդ Պայմանավորվող պետությունում ենթակա չէ ժամանակային սահմանափակումների կամ գերակայության սահմանման, որոնք, այդ Պայմանավորվող պետության

օրենքի համաձայն, կիրառվում են եկամտային հայցի նկատմամբ՝ հայցի բնույթի հիման վրա: Ավելին, 3-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն Պայմանավորվող պետության կողմից ընդունված եկամտային հայցը չի կարող այդ Պայմանավորվող պետությունում ունենալ որևէ գերակայություն, որը կիրառելի է այդ եկամտային հայցի նկատմամբ՝ մյուս Պայմանավորվող պետության օրենքի համաձայն:

6. Պայմանավորվող պետության եկամտային հայցի գոյության, օրինականության կամ գումարի վերաբերյալ դատական գործերը չեն ներկայացվում մյուս Պայմանավորվող պետության դատարան կամ վարչական մարմիններ:

7. 3-րդ և 4-րդ պարբերություններին համապատասխան Պայմանավորվող պետության կողմից հարցումն ուղարկվելուց հետո ցանկացած ժամանակ և նախքան մյուս Պայմանավորվող պետության կողմից համապատասխան եկամտային հայցի գանձումն ու փոխանցումը առաջինը նշված Պայմանավորվող պետությանը, համապատասխան եկամտային հայցը դադարում է գոյություն ունենալ:

ա) 3-րդ պարբերությանը համապատասխանող հարցման դեպքում, երբ առաջինը նշված Պայմանավորվող պետության եկամտային հայցը հնարավոր է իրականացնել այդ Պետության օրենսդրությամբ և պատկանում է այն անձին, որն այդ պահին չի կարող, այդ Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն, խոչընդոտել դրա հավաքմանը, կամ

բ) 4-րդ պարբերությանը համապատասխանող հարցման դեպքում, երբ եկամտային հայցը այնպիսի հայց է, որի նկատմամբ այդ Պայմանավորվող պետությունը կարող է, իր օրենսդրության համաձայն, ընդունել եկամտային հայցի գումարի պահպանման միջոցներ՝ գանձումն ապահովելու նպատակով,

սպա առաջինը նշված Պայմանավորվող պետության իրավասու մարմինն անմիջապես պետք է ծանուցի մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինն այդ փաստի մասին, և, մյուս Պայմանավորվող պետության ընտրությամբ, առաջինը նշված Պայմանավորվող պետությունը կարող է կասեցնել կամ հետ վերցնել իր հարցումը:

8. Սույն հոդվածի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվում որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) ձեռնարկել իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությանը կամ վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցներ,

բ) ձեռնարկել պետական քաղաքականությանը (հասարակական կարգին) հակասող միջոցներ,

գ) տրամադրել աջակցություն, եթե մյուս Պայմանավորվող պետությունը չի ձեռնարկել եկամտային հայցի հավաքման կամ պահպանման համար (կախված կոնկրետ դեպքից) բոլոր համապատասխան միջոցները՝ Պայմանավորվող պետությունների օրենսդրության կամ վարչական պրակտիկայի համաձայն,

դ) ցուցաբերել աջակցություն այն դեպքերում, երբ վարչական ծանրաբեռնվածությունը այդ Պայմանավորվող պետության համար միանշանակ համամասնական չէ մյուս Պայմանավորվող պետության կողմից ստացվող եկամուտներին:

Հոդված 28

ՕԳՈՒՏՆԵՐԻ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

1. Անկախ սույն Համաձայնագրի որևէ հոդվածի դրույթներից՝ սույն Համաձայնագրի շրջանակներում տրամադրվող օգուտները չեն կարող տրամադրվել Պայմանավորվող պետության կազմակերպություններին, եթե այդ կազմակերպությունների նպատակը սույն Համաձայնագրի շրջանակներում օգուտներ ստանալն է, որն այլ կերպ հասանելի չէր լինի:

2. Սույն Համաձայնագրի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող խոչընդոտել Պայմանավորվող պետությանը կիրառել ներքին օրենսդրության դրույթները, որոնց նպատակն է կանխել հարկերի վճարումից խուսափելը՝ պայմանով, որ խնդրո առարկա եկամտի հարկումը այդ Պայմանավորվող պետությունում չի հակասում Համաձայնագրին:

3. Մի պայմանավորվող պետության իրավասու մարմինը մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ խորհրդակցելուց հետո մերժում է տրամադրել սույն Համաձայնագրի շրջանակներում օգուտներ որևէ անձի կամ որևէ գործարքի նկատմամբ, եթե, իր կարծիքով, այդ օգուտների տրամադրումը կհանգեցնի Համաձայնագրի դրույթների չարաշահման:

Հոդված 29

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի սահմանափակում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունները:

Հոդված 30

ՈՒԺԻ ՄԵՁ ՄՏՆԵԼԸ

Սույն Համաձայնագիրը պետք է վավերացվի Պայմանավորվող պետությունների ներքին իրավական ընթացակարգերի համաձայն և ուժի մեջ կմտնի ներքին իրավական ընթացակարգերի կատարումը հաստատող վերջին դիվանագիտական հայտագրի ստանալու ամսաթվին հաջորդող երրորդ ամսվա առաջին օրը: Սույն Համաձայնագրի դրույթները երկու Պայմանավորվող պետությունների համար կիրառվում են.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամուտների նկատմամբ,

բ) եկամտի կամ գույքի մյուս հարկերի առնչությամբ՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող յուրաքանչյուր հարկվող տարվա համար:

Հոդված 31

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում անորոշ ժամկետով՝ մինչև դադարեցվի Պայմանավորվող պետություններից մեկի կողմից:

2. Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած 5 տարի հետո, որևէ օրացուցային տարվա ավարտից առնվազն 6 ամիս առաջ այդ մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ուղարկելով: Այդ դեպքում Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը երկու Պայմանավորվող պետությունների համար՝

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցագիրը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված կամ հաշվարկված եկամուտների նկատմամբ, և

բ) եկամտի կամ գույքի մյուս հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցագիրը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ այդ օրվանից հետո սկսվող՝ հարկման ենթակա տարիների համար:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄԸ ՈՐԻ՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Բրատիսլավա քաղաքում 2015 թվականի մայիսի 15-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, սլովակերեն և անգլերեն: Մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության և Սլովակիայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրի ստորագրման պահին պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները համաձայնության եկան հետևյալի շուրջ.

1. Համաձայնագրի մեկնաբանությունը

Համաձայնացված է, որ Համաձայնագրի դրույթները, որոնք մշակվել են ՏՀԶԿ-ի Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը և ՄԱԿ-ի Զարգացած և զարգացող երկրների միջև կրկնակի հարկման մոդելային համաձայնագրի դրույթներին համապատասխան, ունեն նույն իմաստը, որն ամրագրված է ՏՀԶԿ-ի և ՄԱԿ-ի մեկնաբանություններում: Նախորդ նախադասության միտքը չի կարող կիրառվել ցանկացած այլ մեկնաբանության նկատմամբ, որը համաձայնեցվել է համապատասխան լիազորված մարմինների միջև՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:

2. 4-րդ հոդվածի 3-րդ ենթակետ (Ռեզիդենտ)՝

«Փաստացի կառավարման վայր» տերմինը այն վայրն է, որտեղ կայացվում են կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ առանցքային կառավարչական և առևտրային որոշումները:

3. 5-րդ հոդվածի 4-րդ ենթակետ (Մշտական հաստատություն)

Համաձայնեցին, որ «առաքում» հասկացությունն իր մեջ չի ներառում հետևյալ դեպքերը
ա) տոնավաճառներում ցուցադրված ապրանքների վաճառքը՝ տոնավաճառի ավարտից հետո,
բ) առաքման համար նախատեսված խանութներից վաճառքի իրականացումը:

4. 7-րդ հոդվածի 3-րդ կետ (Ձեռնարկատիրական գործունեությունից շահույթ)

Համաձայնեցին, որ Հայաստանում նվազեցվող ծախսեր են համարվում միայն այն ծախսերը, որոնք սահմանված են ՀՀ ներքին օրենսդրությամբ:

5. 11-րդ հոդվածի 3-րդ կետ (Տոկոսներ)

Մլովակիայի Հանրապետության դեպքում 11-րդ հոդվածի 3-րդ կետում «ֆինանսական կազմակերպություն» տերմինը նշանակում է

- ա) Մլովակիայի Ազգային բանկ,
- բ) Մլովակիայի Հանրապետության արտահանման-ներմուծման բանկ,
- գ) Մլովակիայի երաշխիքների և զարգացման բանկ,
- դ) Մլովակիայի պարտքի և իրացվելիության կառավարման գործակալություն:

6. 26-րդ հոդվածի 2-րդ կետ (Տեղեկությունների փոխանակում)

Պայմանավորվող Կողմերի պետությունների լիազորված ներկայացուցիչները կարող են թույլ տալ հարկային մարմիններին փոխանակել տեղեկություններ այլ իրավասյահ և դատական մարմիններին առաջնային նշանակություն ունեցող որոշ հարցերի դեպքում (օր.՝ փողերի լվացման դեմ պայքար, կոռուպցիա, ահաբեկչության ֆինանսավորում):

Սույն Արձանագրությունը հանդիսանում է վերոնշյալ Համաձայնագրի անբաժանելի մասը:

Ի ՎԿՍՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ համապատասխան ձևով լիազորված ներքո ստորագրյալները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարվել է ք. Բրատիսլավայում, 2015 թվականի մայիսի 15-ին, երկու նույնական բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն, սլովակերեն և անգլերեն լեզուներով: Տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2017թ. փետրվարի 9-ին